

# ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանի ուղերձը՝ ՀՀ Անկախության օրվա առթիվ

21.09.2020

Մի րեւի՛ հայրենակիցներ, շնորհավորում եմ բոլորիս համազգային տոնի՝ Հայաստանի Անկախության օրվա առթիվ:

29 տարի առաջ այս օրը՝ սեպտեմբերի 21- ին, իրականություն դարձավ հայ ժողովրդի վաղեմի երազանքը. մենք այլևս սկսեցինք ապրել և

ապրել ազատ, անկախ Հայաստանի Հանրապետությունում:

Մենք ապացուցեցինք, որ երազանքը կարող է իրականություն դառնալ:

Բոլորս քաջ գիտակցում ենք, որ անկախությունը հեշտ չի տրվել մեր ժողովրդին, այն ձեռք է բերվել բազմաթիվ դժվարությունների ու մաքառումների գնով:

Վստահ եմ, որ յուրաքանչյուր հայորդի, բարձր գնահատելով ունեցած ձեռքբերումները, ոչինչ չի խնայի հզոր ու կայացած հայոց պետության համար:

Բոլորիս մաղթում եմ երջանկություն և լավատեսություն, խաղաղություն և բարեկեցություն օրեցօր շենացող Հայաստանի Անկախ Հանրապետությունում:

Կեցցե՛ Հայաստանի Հանրապետությունը:

Կեցցե՛ Անկախությունը: